



## Ոչ թե պարտքի վերակառուցում կամ նվազեցում, այլ երկրում բնապահպանական վիճակի բարելավում

ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը հանդիպել է Համաշխարհային բանկի «Շրջակա միջավայրի պահպանություն՝ պարտքի դիմաց» ծրագրի առաքելության անդամներին՝ ավագ տնտեսագետներ Գոհար Գյուլունյանին, Լեա Հաքիմին, բնապահպանական հարցերով մասնագետ Մայա Մուրիշիչին և խորհրդատու Ալեքս Լևինտաներին: Հանդիպմանը մասնակցել են նաև նախարարության համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներ: Առաքելությունը Հայաստան է ժամանել հանրապետության արտաքին պարտքի դիմաց բնապահպանական միջոցառումներ իրականացնելու ծրագրի ճանապարհային քարտեզի մշակման նպատակով:

Նախարար Արծվիկ Մինասյանը շեշտել է ծրագրի կարևորությունը Հայաստանի համար, ինչի վկայությունն է դրա իրականացման ուղղությամբ արագ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ ՀՀ Նախագահի ուղղակի ցուցումը և արագացված կարգով ՀՀ վարչապետի հանձնարարականով՝ փոխվարչապետի գլխավորությամբ կառավարու-

թյան անդամներից համապատասխան կառույցի ձևավորումը և նրա աշխատակարգի հաստատումը: Վերահաստատելով հայկական կողմի վճռական տրամադրվածությունը ծրագրի արդյունավետ իրականացնելու գործընթացում՝ Բնապահպանության նախարարն առաջնային է համարել պարտատեր պետությունների հետ արդյունավետ աշխատանքները, ինչի համար կարևորել է համարել ծրագրի հիմքում բնապահպանական բաղադրիչների առաջնայնության դիտարկումը: «Մենք առանձնացրել ենք ծրագրի երեք հիմնական ուղղություն, որոնք կարևոր տեղ են զբաղեցնում Հայաստանի տնտեսության մեջ և ունեն բնապահպանական հստակ ուղղվածություն: Հայաստանի կայուն զարգացման տեսանկյունից այդ երեք ուղղությունները չափազանց կարևորվում են:

Մեր նախարարությունն իր ողջ ներուժով պատրաստ է համագործակցել աշխատանքային խմբի հետ՝ տարածաշրջանում առաջինն այս ծրագիրը կյանքի կոչելու համար», - նշել նա:

Հարունակությունը՝ էջ 2 /

• Ոչ թե դարսփի վերակառուցում կամ նվազեցում, այլ երկրում բնապահպանական վիճակի բարելավում

Սկիզբը էջ 11

Առաքելության ղեկավար Գոհար Գյուլումյանը նշել է, որ պատասխանատու գերատեսչությունների հետ մեծ հանդիպումները թույլ կտան մշակել ծրագրի ինստիտուցիոնալ կառուցվածքի և ճանապարհային քարտեզի օպտիմալ տարբերակ: Ավագ տնտեսագետը տեղեկացրել է, որ Համաշխարհային բանկը որոշել է առաքելությունը համալրել մասնագիտացված ընկերության միջազգային փորձագետով, որը փորձառություն ունի պետությունների պարտքի վերակառուցման ու «պարտք՝ բնապահպանական ծրագրերի դիմաց» ծրագրերի իրականացման ոլորտում և նշել. «Բնապահպանական խնդիրները միջազգային հանրության մոտ այնպիսի հնչեղություն ունեն և զարգացած երկրների վերաբերմունքը բնապահպանական խնդիրների հանդեպ այնպիսի է, որ ճիշտ ժամանակն է, որ այդ մեխանիզմն օգտագործվի նաև Հայաստանի դեպքում: Փորձագետը կմշակի գործողությունների այն հա-

ջորդականությունը կամ զուգահեռ քայլերը, որոնք կբերեն ծրագրի հաջողության»: Նախարարը շեշտել է, որ հայկական կողմը գնում է, ոչ թե պարտքի վերակառուցման, կամ նվազեցման, այլ՝ երկրում բնապահպանական վիճակի բարելավման, ինչի արդյունք կդառնա արտաքին պարտքի նվազեցումը, և առաջարկել, որ ծրագրի հիմքում դնել այնպիսի մոտեցումներ, /օրինակ անտառները, ջրային ռեսուրսները և տեխնոլոգիաները և այլն/, ինչը կշահագործի նաև գործընկեր պետություններին, որոնց հետ հետագայում պետք է վարվեն բանակցություններ:

Կողմերը պայմանավորվել են աշխատանքային հանդիպումները հաճախ կազմակերպել՝ ծրագրի ճանապարհային քարտեզը մինչև հոկտեմբեր ամսի երրորդ տասնօրյակ մշակելու նպատակով:

**Չեխիայի բնության պահպանության գործակալության պատվիրակությունը Հայաստանում**

ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանն ընդունել է Չեխիայի Հանրապետության բնության պահպանության գործակալության տնօրեն Ֆրանտիշեկ Պելչի գլխավորած պատվիրակությանը, որին ուղեկցում էր Հայաստանում Չեխիայի արտակարգ և լիազոր դեսպան Պետր Միկիսկան: Ողջունելով հյուրերին՝ փոխնախարարը կարևորել է այն առաքելությունը, որով խումբը ժամանել է Հայաստան և ինչը մեծապես կնպաստի Չեխիայի հետ Հայաստանի ստորագրած համագործակցության հուշագրի կոնկրետ դրույթների կատարմանը: Խ. Հակոբյանը հիշեցրել է, որ փաստաթղթում ամրագրված էին գործողություններ 2017-18 թվականների համար, որոնցով հստակ քայլեր են նախանշված բնության հատուկ պահպանվող տարածքների, կենսաբազմազանության պահպանման և էկոտուրիզմի ոլորտներում:

Չեխիայի Հանրապետության բնության պահպանության գործակալության տնօրեն Ֆրանտիշեկ Պելչը նշել է, որ բարձր են գնահատում Հայաստանի հետ համագործակցությունը և ձեռք բերված պայմանավորվածությունները հատկապես բնապահպանության ոլորտում: Բնա-



պահպանական ոլորտի պատասխանատու գերատեսչությունների համագործակցության հիմնական նպատակը փորձի փոխանակումն է և կոնկրետ ծրագրերի իրականացումը, ինչը կնպաստի շրջակա միջավայրի պահպանության արդյունավետության բարձրացմանը: Դեսպան Պետր Միկիսկան տեղեկացրել է, որ Ֆրանտիշեկ Պելչի ղեկավարած աշխատանքային խումբը նախատեսում է լինել «Ձանգեզուր» կենսոլորտային համալիրում և «Դիլիջան» ազգային պարկում՝ տեղում ծանոթանալու պահպանման ռեժիմներին, կառավարման ծրագրերին, ինչին կհաջորդի համագործակցության կոնկրետ ծրագրերի մշակումն ու իրականացումը: Կողմերը պայմանավորվել են հանդիպել հաջորդ շաբաթ՝ քննարկելու մարզային այցելությունների արդյունքները:

## Ընդգրկուն եւ գիտականորեն հիմնավորված համաձայնագիր Գիտությունների ազգային ակադեմիայի, Բնապահպանության եւ Արտակարգ իրավիճակների նախարարությունների միջեւ



«Գիտությունների ազգային ակադեմիայում կնքվել է համագործակցության համաձայնագիր ԶԶ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի, ԶԶ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի և ԶԶ արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն»: ՊՈԱԿ-ի միջև: Համաձայնագիրը ստորագրել են վերոհիշյալ կառույցների տնօրեններ Սիմոն Պապյանը, Վլադիմիր Սահակյանը և Լևոն Վարդանյանը: Միջոցառմանը մասնակցել են ԶԶ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը, ԶԶ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը, ԶԶ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանը և այլ պաշտոնատար անձինք: Ողջունելով ներկաներին՝ Ռադիկ Մարտիրոսյանը ներկայացրել է համագործակցության հեռանկարները և համաձայնագրի շրջանակներում ԳԱԱ-ի կողմից ընձեռվելիք տեխնիկական նոր հնարավորությունները:

Վլադիմիր Սահակյանը նշել է, որ 2009 թվականից համաձայնագրի կողմեր հանդիսացող կառույցները համագործակցում են և ներկայումս ստորագրվում է 5 տարվա համար համատեղ իրականացվելիք պիլոտային ծրագրեր:

Սիմոն Պապյանը, ներկայացնելով ԳԱԱ-ի և ԶԶ ԱԻՆ-ի հետ համագործակցության հիմնական ուղղությունները, նշել է, որ այս համաձայնագրով այն կորվի իրավական հիմքի վրա, ինչը կբարձրացնի համատեղ աշխատանքների արդյունավետությունը:

99Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն:: ՊՈԱԿ-ի տնօրեն Լևոն Վարդանյանը կարևորել է ԳԱԱ-ի հետ համագործակցությունը, ինչը մասնավորապես նպաստել է հիդրոօդերևութաբանության ոլորտում զարգացումների ապահովմանը:

ԶԶ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանն էլ կարևորել է ԳԱԱ-ի գիտական ներուժի օգտագործումը հանրապետության բոլոր ոլորտներում և առաջարկել երեք կառույցների միջև առաջիկայում ստորագրել ավելի ընդգրկուն՝ շրջանակային համաձայնագիր, ինչը հնարավորություն կտա ԳԱԱ-ին լիարժեք ներգրավվել պետական և դրամաշնորհային ծրագրերին և կուժեղացնի համագործակցությունը գլոբալ կլիմայական փո-

փոխություններով պայմանավորված զարգացումներին արձագանքելու և մեղման գործընթացներ իրականացնելու ուղղությամբ: «ԶԶ բնապահպանության նախարարությունում ձևավորելով «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ը՝ մեր առաջ նպատակ ենք դրել ստեղծել մի համակարգ, որը կիրականացնի շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով մոնիթորինգ, քանի որ դրանք փոխկապված են, և կտա լիարժեք կանխատեսումներ: Այդ նպատակներն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտություն է ԶԶ ԳԱԱ-ի հետ համատեղ գիտականորեն հիմնավորված ծրագրերի իրականացումը», -նշել է բնապահպանության նախարարը:

ԶԶ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանը, ողջունելով համագործակցության հուշագրի ստորագրումը, շեշտել է, որ այն էապես կօգնի իր ղեկավարած գերատեսչությանը արդյունավետորեն լուծել կարևորագույն խնդիրներից մեկը՝ վաղ ազդարարման և աղետների կանխարգելման հարցը:

ԶԶ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը համատեղ ԶԶ բնապահպանության նախարարության մասնագետների հետ վերջին տարիներին մի շարք աշխատանքներ է իրականացրել բնապահպանական խնդիրները տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով լուծելու ուղղությամբ: Մասնավորապես, մթնոլորտ արտանետումների կառավարման բնագավառում ուսումնասիրվել և փորձարկվել են ժամանակակից թվային մոդելներ մթնոլորտային օդի աղտոտվածության գնահատման և կանխատեսման համար, ստեղծվել են տվյալների էլեկտրոնային բազաներ, քարտեզագրվել են մթնոլորտ արտանետումներն անշարժ աղբյուրներից: Սույն Համաձայնագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել մի շարք աշխատանքներ էլեկտրոնային կառավարման համակարգի ստեղծման, տվյալների բազաների ստեղծման, մթնոլորտի աղտոտվածության գնահատման, քարտեզագրման, մոդելավորման, ինչպես նաև մոնիթորինգի ավտոմատացված (on-line) համակարգի ստեղծման ուղղություններով: Համաձայնագրի կնքումը նոր թափ կտա այս աշխատանքներին և հնարավորություն կընձեռի ներդնել գիտական հետազոտություններն արտադրական գործունեության մեջ, կամրապնդի ԶԶ ԳԱԱ և ԶԶ բնապահպանության նախարարության համագործակցությունը: Ծրագրից ստացված արդյունքները կարևոր են տնտեսության տարբեր ճյուղերի, բիզնես միջավայրի, ինչպես նաև գիտական և ուսումնական հաստատությունների համար: Ստեղծված էլեկտրոնային կառավարման համակարգերը թույլ կտան բարձրացնել բնապահպանական կառավարման արդյունավետությունը և թափանցիկությունը, կապահովեն տվյալների հուսալիությունն ու հասանելիությունը, կնպաստեն կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:

## Էկոլոգիայի հետազոտողները դառնում է կարելու որ գրավիչ մասնագիտություն

ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի՝ էկոլոգիական լրագրության մեջ մասնագիտացող ուսանողները ցանկություն էին հայտնել ծանոթանալ հանրային կապերի գործառույթի շրջանակներում ՀՀ բնապահպանության նախարարության իրականացրած աշխատանքներին: Կամընտրական /կամավոր էկոլոգիական լրագրողի մասնագիտությունն ընտրած/ խմբի ուսանողներին և ղեկավարին ընդունել են ՀՀ բնապահպանության նախարարի խորհրդական Արծրուն Պեպանյանը, մամուլի քարտուղար Մարինե Կարապետյանը և Տե-

ղեկավարության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Արմեն Վարդանյանը: Ոլորտի պատասխանատուները ներկայացրել են հանրային իրազեկման և էկոլոգիական կրթության ուղղությամբ վարվող քաղաքականության և իրականացվող աշխատանքների ընթացքը, բնապահպանական տեղեկատվության տրամադրման գործընթացը կարգավորող իրավական ակտերը և մեխանիզմները, պատասխանել ուսանողներին հետաքրքրող հարցերին: Ուսանողները ցանկություն են հայտնել համագործակցել բնապահպանական գերատեսչության համապատասխան ստորաբաժանումների հետ՝ մասնագիտական հրապարակումներ պատրաստելու նպատակով: Ուսանողների խումբը եղել է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունում՝ տեղում հետևել ստարաբաժանման աշխատանքներին:



## «Դիլիջան» ազգային պարկի հենակետերից մեկը հրկիզելու դեպքի մանրամասները

Նոյեմբերի 13-ին՝ ժամը 21:40-ին, ոստիկանությունում ահազանգ է ստացվել, որ ժամը 20:50-ին անհայտ անձինք մոտեցել են «Դիլիջան» ազգային պարկի Շամախյան հենակետին, վիճաբանել ծառայություն իրականացնող անձանց հետ, և այդ ընթացքում անհայտ անձը հրկիզել է հենակետին կցված վագոն տնակը: Այս մասին Yerkir.am-ին հայտնեցին ոստիկանությունից: Պահակետն ամբողջությամբ այրվել է: Բարեբախտաբար, տուժածներ չկան: Նշենք, որ այդ հենակետում խստացված ռեժիմով հսկողություն պետք է իրականացնեն «Պանտերա» ընկերությունը: Հրդեհի վայրում է եղել նաև բնապահպանության նախարար Արծրիկ Մինասյանը: «Պանտերա» ընկերության հիմնադիր Հայկ Դարբինյանն ասել է, որ պահնորդային ծառայություն իրականացնող

երեք հենակետ ունեն, որոնցից մեկն էլ հենց հրդեհել են: Նա պատմել է, որ երեկոյան 8 անց 40-ի սահմաններում մոտ 40 հոգի «Վիլիս»-ներով եկել, շրջապատել են Շամախյանի հենակետը, պահնորդներից երկուսին դուրս հանել հենակետից: «Ամենավայրագ ձևերով քաշքշել են, մեկին ծեծել ու վառել հենակետը: Նույն այդ պահին բնապահպանության նախարարի հետ Իջևանից վերադառնում էինք երևան: Լուրն անմիջապես զեկուցեցի նախարարին, և դեպքից մի քանի րոպե անց արդեն տեղում էինք», - ասել է Դարբինյանը: Նրա խոսքով՝ տեղացիներն ասում են, որ արդեն 30 տարի է՝ իրենք անտառից փայտ են դուրս հանում և հիմա չեն համակերպվում այն բանի հետ, որ այլևս չեն կարողանալու փայտագողությամբ զբաղվել: Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասով: Այս մասին տեղեկացնում է ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Գոռ Աբրահամյանը: Ներկա պահին ընթանում են քննչական, ակտիվ օպերատիվ-որոնողական աշխատանքներ՝ միջադեպի հանգամանքները և հենակետի առերևույթ հրկիզման հնարավոր մասնակիցների շրջանակը պարզելու ուղղությամբ:

## Բնության հատուկ պահպանվող տարածքներում ուժեղացված ռեժիմով իրականացվող աշխատանքները տալիս են իրենց ցանկալի արդյունքները

Նախարարության «Դիլիջան» ազգային պարկում շարունակվում են ուժեղացված ռեժիմով ստուգայցերն՝ ապօրինի ծառահատումների և որսագողության դեպքերը կանխարգելելու և բացահայտելու նպատակով: Աշխատակիցների կողմից շուրջօրյա շրջայցերի ընթացքում հայտնաբերվել է 3 անտառախախտման դեպք /6 ապօրինի ծառահատում/, կազմվել են անտառախախտման արձանագրություններ և ուղարկվել ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարին: Ազգային պարկի կողմից իրացվել է 93,0 խ.մ փայտանյութ՝ միջինը 3000 դրամ 1 մա թափուկի դիմաց /ընդամենը՝ 877.6 հազ.դրամ գումարով/: Հանրության իրազեկման նպատակով համապատասխան նյութեր են տրամադրվել Դիլիջան քաղաքի և Տավուշի մարզային լրատվամիջոցներին՝ որսագողության, ապօրինի ծառահատումների, արածեցումների, ապօրինի շինությունների դեմ պայքարի աշխատանքներ

կազմակերպելու վերաբերյալ: «Դիլիջան» ազգային պարկի համապատասխան մասնագետները հանդիպել են ADEA հիմնադրամի աշխատակիցների և «Տրանս-Կովկասյան արահետ» ՀԿ-ի ներկայացուցիչների հետ՝ էկոերթուղիների ճշգրտման և հետագա ծրագրերի քննարկման նպատակով: ՀՀ բնապահպանության նախարարության «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի պահպանության բաժնի աշխատակիցների կողմից ապօրինի ձկնորսության վերաբերյալ շաբաթվա ընթացքում կազմվել է մեկ արձանագրություն: Առգրավվել է 4 հատ պուլիտիլենային ձկնորսական ցանց, 55 հատ «սիգ» տեսակի ձուկ, ինչը հանձնվել է Սևանի թիվ 3 «Հեքիաթ» ՀՈԱԿ-ին: ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայության տակ գտնվող բնության հատուկ պահպանվող մյուս տարածքներում նույնպես պահպանումն իրականացվում է ուժեղացված ռեժիմով:



### Պարզաբանում

Էլեկտրոնային մամուլում շրջանառվում է տեղեկատվություն «խոսրովի անտառ» պետական արգելոցի աշխատակիցների պաշտոնից ազատման վերաբերյալ: ՀՀ բնապահպանության նախարարությունը հայտնում է, որ Օգոստոսի 12-ին արգելոցում արձանագրված հրդեհի բռնկման և դրա դեմ պայքարի գործընթացում կառավարման համակարգում հայտնաբերվեցին մի շարք բացեր և բնականաբար առաջացավ համակարգում բարեփոխման համալիր միջոցառումների անելու անհարժեշտություն: Այդ նպատակով արգելոցում մեկ-



նարկել է կառուցվածքային և կադրային բարեփոխումների գործընթաց, ինչի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով Սեպտեմբերի 25-ին ծանուցվել են արգելոցի բոլոր աշխատակիցները: Մինչ այդ «խոսրովի անտառ» պետական արգելոցի երեք աշխատակից սեփական դիմումների համաձայն ազատվել են զբաղեցրած պաշտոններից:

# Մենք բաց ենք ցանկացած առաջարկություն, ամենախիստ քննադատություն լսելու



**«Բնություն» շաբաթաթերթի հարցերին Պատասխանում է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Ե. Տերտերյանը**

ավելի արդյունավետ, քան նախկինում:

**-Ստացվում է Տեսչական մարմինը դեռևս ձևավորման փուլում՞ է:**

-Այո, այս պահին մենք միաժամանակ աշխատում ենք երկու գլխավոր ուղղությամբ: Ձևավորվել, համալրվել աշխատակիցներով, կայանալ, ինչպես նաև զուգահեռ իրականացնել կանոնադրությամբ և ՀՀ օրենքով սահմանված մեր գործառույթները: Աշխատանքը, ինչպես տեսնում եք, բավականին ծանրաբեռնված է, քանի որ ողջ անձնակազմը դեռ համալրված չէ: Ասեմ ավելին՝ այս պահին ԱԱԾ և ՀՀ ՀՔԾ կողմից հարուցված քր. գործերով նշանակված և իմ 14.09.2017 թվականի հանձնարարագրերի հիման վրա իրականացվում են լայնամասշտաբ ստուգումներ «Հայանտառ» ՊՈԱԿ թվով 8 անտառտնտեսություններում՝ Սյունիքի, Լոռու և Տավուշի մարզերում: Այս ստուգումներում ընգրկված է տեսչական անձնակազմի մոտ 35 տոկոսը: Ստուգումներում շահերի բախման երևույթն անգամ տեսականորեն բացառելու նպատակով ստուգող աշխատանքային խմբերի ձևավորման հիմքում որդեգրել ենք այն տրամաբանությունը, որ մի տարածաշրջանում իրականացվող ստուգումների գործընթացում պետք է ընգրկվեն մեկ այլ տարածաշրջանի տարածքային ստորաբաժանման տեսուչները: Դրանով կչեզոքացվի ցանկացած անձնական-բարեկամական հարաբերությունների ազդեցությունը ստուգումների արդյունավետության և թափանցիկության վրա, և կբացառվի որևէ շահերի բախում, թեև պետք է նշեմ, որ մենք որևէ կասկած չունենք մեր աշխատակիցների հանդեպ:

**-Պարոն Տերտերյան, ի՞նչ նպատակով ԲՆ բնապահպանական պետական տեսչությունը լուծարվեց և ստեղծվեց նոր մարմին՝ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, ի՞նչ երաշխիք, որ այն գործելու է ավելի արդյունավետ:**

-Նախ տեղեկացնեմ, որ Տեսչական բարեփոխումները Հայաստանում մեկնարկել են դեռևս 2009 թվականին: Այս նպատակով ստեղծվել է տեսչական բարեփոխումների համակարգման խորհուրդ՝ վարչապետի գլխավորությամբ:

2014թ. ընդունվել է հայեցակարգ, ըստ որի այդ ժամանակ գործող տեսչությունների փոխարեն մինչ 2018թ. կձևավորվեն նոր տեսչական մարմիններ, որոնք կաշխատեն նոր մոտեցումներով ու ձևաչափերով: Ստուգում իրականացնող մարմինները գործում էին մի շարք ոլորտներում և շատ հաճախ դրանք խաչվում էին ու առաջացնում կրկնորոշումներ: Այս և այլ խնդիրների լուծման համար վերոնշյալ բարեփոխումների շրջանակներում իրականացվեցին տարբեր մարմինների միավորումներ, որի արդյունքում օր՝ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի վերահսկողության պետական տեսչությունը և Բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչությունը միավորվեցին և ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվեց Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը:

Վերահսկողություն իրականացնող մարմինների առավել արդյունավետ գործելու նպատակով տրվեց որոշակի անկախություն, ինչն անհրաժեշտ է, որպեսզի այն վերահսկողություն իրականացնի առավել անկաշկանդ, ներդրվեց կոլեգիալ կառավարման համակարգ՝ Տեսչական մարմնի կառավարման խորհուրդ, որում ընգրկվեցին նաև հասարակական կազմակերպությունների և գիտության ոլորտի ներկայացուցիչներ: Այս բարեփոխումներով պայմանավորված՝ մենք վստահ ենք, որ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը ամբողջությամբ ձևավորվելուց և կայանալուց հետո գործելու է

**-Մամուլում լուր տարածվեց, թե Տեսչական մարմնում ճիշտ կադրային քաղաքականություն չի տարվում, որ ոլորտային մասնագետները բացակայում են և որ Ձեր ծանոթ-բարեկամներին եք տեղավորում աշխատանքի:**

-Մեր կադրային քաղաքականության վարման հիմքում ընկած առաջնային սկզբունքներն են՝ մասնագիտական բարձր պատրաստվածությունը և համապատասխան ոլորտում աշխատանքային փորձը: Կարևորում ենք նաև հայրենասիրությունն ու բնասիրությունը, որովհետև անհրաժեշտ է մեծ աշխատանք ունենք անելու, իսկ ես վստահ եմ, որ հայրենասեր և բնասեր մասնագետն ավելի մեծ էնտուզիազմով և նվիրումով կաշխատի, քան զուտ միայն մասնագետը:

• Մենք բաց ենք ցանկացած առաջարկություն, ամենախիստ ֆնանդասություն լսելու

Սկիզբը էջ 6 /

Իսկ բամբասանքային, չարախնդալու միտումով արված այդ հրապարակումներին ընդհանրապես պետք չէ անգամ ուշադրության արժանացնել. բայց որպեսզի Ձեզ համար պարզ լինի իրավիճակը, ավելացնեմ, որ ձևավորվող Տեսչական մարմնում աշխատանքի ընդունում ենք փորձաշրջանով, նրանք, ովքեր աշխատանքի մեջ իրենց կորստրեն բարձր մակարդակով, նրանց հետ էլ կշարունակենք աշխատել, իսկ ովքեր՝ ոչ, նրանց կփոխարինեն նոր աշխատակիցները:

Մենք բաց ենք ցանկացած առաջարկություն, ամենախիստ քննադատություն լսելու, եթե դրանց մեջ սրտացավություն կա այս ընդհանուր գործի համար, այլապես եթե սրտացավություն, մի բան չտկելու ցանկություն չկա քննադատության մեջ, ապա դա ոչ թե քննադատություն է, այլ ընդամենը չարախոսություն, իսկ չարախոսություններին և հերյուրանքներին վերաբերվում ենք հումորով:

**-Մամուլում լուր տարածվեց նաև, որ Ձեր հարաբերությունները լարված են Բնապահպանության նախարարի հետ, այս մասով ի՞նչ կասեք:**

-Կասեմ, դրանք բամբասանքային անտեղյակության ծնունդ, հիմքեր չունեցող ենթադրություններ են: Մեր հարաբերությունները նորմալ են, մենք ջերմ համագործակցային հարաբերությունների մեջ ենք նախարարության հետ:

Եվ, առհասարակ, պետական պաշտոնյաներն ունեն մեկ նպատակ, ծառայել պետությանը և նրա բարգավաճմանը, և ես ընդունելի չեմ համարում, որ անգամ եթե որևէ դեպքում պաշտոնյաների միջև լինի անձնական որևէ խնդիր, ապա դա հանգեցնի աշխատանքային լարվածության: Կրկնում եմ, բոլոր պաշտոնյաների նպատակը պետք է լինի մեկը՝ ծառայել պետության շահերին:

**-Քանի որ սա Ձեր առաջին հարցազրույցն է նոր մարմնի ղեկավարի պաշտոնում, գուցե թե ասելիք կունենա՞ք մեր թերթի ընթերցողներին:**

-Մենք բնավ չենք հավակնում մեր որոշումներում լինել բացարձակ ճշմարիտ: Բնական է, նա ով գործում է, չի կարող սխալներից խուսափել: Ուստի ես ցանկանում եմ ևս մեկ անգամ ընդգծել, որ մենք բաց ենք հասարակության առաջ, պատրաստ ենք լսել և ընդունել ցանկացած առաջարկ, առողջ քննադատություն, հասարակության, հասարակական կազմակերպություններից անկնկալում եմ սերտ համագործակցություն և ակտիվություն բնապահպանական խնդիրների վեր հանման, ահազանգման և դրանց լուծման հետ կապված, ինչպես նաև հորդորում եմ գերծ մնալ տարատեսակ բամբասանքներից և չարախոսություններից, սիրել բնությունը և հոգ տանել նրա մասին:

«Բնություն»

**Պետք է ունենալ լավ կառավարում եւ կատարյալ վերահսկողություն**

**Ոչ ֆորմալ հանդիպում բնապահպանական թեմաներ լուսաբանող «Եկոմեդիա ցանցի» լրագրողների հետ**



«Ընկերությունների և կազմակերպությունների միջև կապերի ամրապնդումը և գերատեսչության պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարները «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի «Ջրվեժ» անտառապարկում ոչ ֆորմալ հանդիպում են ունեցել բնապահպանական թեմաներ լուսաբանող «Եկոմեդիա ցանցի» լրագրողների հետ: Նախարարը ներկայացրել է ոլորտի խնդիրները,

դրանց լուծման ուղղությամբ տարվող աշխատանքները, բարեփոխումների ընթացիկ և հեռանկարային ծրագրերը: Արծվիկ Մինասյանը նշել է, որ շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության մշակման և իրականացման գործընթացի հիմքում պետք է դրվի սահմանադրական նորմը՝ սերունդների առաջ պատասխանատու լինելու սկզբունքը, ինչը հնարավորություն կտա բնական ռեսուրսներն այնպես բաշխել, որ դրանցից հնարավորություն ունենան օգտվել բոլոր սերունդները: Ըստ նախարարի պետք է հրաժարվել բնական ռեսուրսների այնպիսի օգտագործումից, ինչը կխտչնորոտի շրջակա միջավայրի վերականգնումը և բնական ընթացքով վերափոխումը: Արծվիկ Մինասյանը, պատասխանելով տեսչական նոր մարմնի ձևավորման անհրաժեշտության վերաբերյալ հարցին, շեշտել է, որ ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ունենալ լավ կառավարում և կատարյալ վերահսկողություն:

չարունակությունը էջ 8 /

• Պեժ է ունենալ լավ կառավարում և կասարյալ վերահսկողություն

Սկիզբը էջ 7 |

Այդ նպատակով բնապահպանության նախարարությունը շահագրգռված է նպաստելու Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ուժեղացմանը: Ուժեղ, անկախ, կատարյալ տեսչական համակարգը կօգնի գերատեսչություններին կատարելագործել և ուժեղացնել քաղաքականության մշակումը և իրականացումը: Այդ նպատակով գերատեսչությունը նաև հանդես կգա օրենսդրական նախաձեռնությամբ՝ որոնցով կփոխվի տեսչական մարմնի աշխատակիցների կարգավիճակը, ինչի արդյունքում տեսուչները վերահսկողություն իրականացնելիս աշխատաժամանակի սահմանափակում չեն ունենա:

Լրագրողների խնդրանքով Արծվիկ Մինասյանը ներկայացրել է «Շրջակա միջավայրի պահպանություն՝ պարտքի դիմաց» ծրագրի հիմնական սկզբունքները: Նախարարը տեղեկացրել է, որ ծրագրով մինչև 2050 թվականը նախատեսվում է մի քանի երկրներին/ ԱՄՆ, Ճապոնիա, ԳԴՀ, ՌԴ, Ֆրանսիա / Հայաստանի ունեցած պարտքի փոխարեն հանրապետությունում իրականացնել շրջակա միջավայրի բարելավման ծրագրեր և ներկայացրել է ոլորտները, որտեղ նախատեսվում է իրականացնել ծրագիրը: Ընտրված են այն ոլորտները, որոնք գտնվում են այդ երկրների հետաքրքրությունների շրջանակում: Բնապահպանության նախարարն այդ ծրագիրը համարել է աննախադեպ այն առումով, որ նման ծրագրեր սովորաբար իրականացվել են այն երկրներում, որտեղ արդեն առկա է եղել արտաքին պարտքի վերադարձման խնդիր, իսկ Հայաստանը այդ խնդիրը չունի և հաջողության դեպքում այն օրինակելի կլինի այլ երկրների համար: Հայաստանում որսի իրականացումը կանոնակարգելու խնդիրների քննարկման ժամանակ Արծվիկ Մինասյանը լրագրողներին ներկայացրել է այդ ուղղությամբ իրականացվող քայլերի մասին: Նախարարը նաև հայտնել է, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանը նախաձեռնություն է հանդես բերել և անձամբ դիմել է իրեն՝ սիրողական որսի համար նախատեսված «Սաֆարի ինտերնեյշնլ» ընկերության տիրապետման տակ գտնվող տեղամասերը վերածել բնության հատուկ պահպանվող տարածքների, որտեղ կարգելվի որսը: Բնապահպանության նախարարը կարևորել է, որ մասնավոր կապիտալը ներգրավվում է բնապահպանական խնդիրների լուծման գործում, ինչը հասարակության մոտ բնապահպանական մշակույթի արմատավորման օրինակ է:

«Էկոմեդիա ցանցի» համահիմնադիր Նարինե Կիրակո-

սյանը ներկայացրել է ՀՀ բնապահպանության նախարարության հետ համագործակցության առաջարկներ: Բանախոսը ցանցի կողմից առաջարկել է մարզերում ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների մասին տեղեկություն տարածել, քանի որ գյուղական վայրերում հիմնական զբաղմունքը անասնապահությունն ու հողագործությունն է, սակայն այդ ոլորտներում բնապահպանության հարցերով մասնագետներ չկան, ապա առաջարկվել է մշակել ձեռնարկներ, որպեսզի բնության վրա ճնշումը մեղմվի: Ըստ բանախոսի, Էկոկրթության ծրագրում կարևոր բաղադրիչ պետք է լինի թափոնների վերաբերյալ գիտելիքների տրամադրումը, դրանց կառավարման հետ կապված հարցերը: Առաջարկվել է պարբերաբար կազմակերպել նաև պատմական, բնության հուշարձանների տարածքների մաքրում, ծառատունկ, նկարչական մրցույթներ, թատերական ներկայացումներ և այլն: Բնապահպանական թեմաներով գրող լրագրողները կարևորել են այդ գործընթացում միջազգային դոնոր կազմակերպությունների ներուժի ներգրավումը և առաջարկել իրենց աջակցությունը հանրապետությունում իրականացվող բնապահպանական միջազգային ծրագրերի տեղեկատվության տարածման բլոկերի իրականացման հարցում:

Հանդիպմանը միացել է նաև Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Եղիշ Տերտերյանը: Լրագրողները հնարավորություն են ունեցել հարցեր ուղղել վերջինիս և գերատեսչության ստորաբաժանումների ղեկավարներին ու ստացել սպառիչ պատասխաններ:



Նախագիծը՝ Արծուն Պեղանյանի  
խմբագիր՝ Սանվել Սկրչյան  
Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի  
Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝  
011 818 517